



Армянский Колледж

Учитесь АРМЯНСКОМ ГОВОРИТЬ НА ЯЗЫКЕ

+7 904 506 91 28

Օրերի հետ

Մայրերի օրերի մեջ պետք է փնտրել ազգերի ճակատագիրը

Մայրության և գեղեցկության տունն ամենագեղեցիկն ու ամենանվիրականն է, անշուշտ: Միգուցե շատերի համար այն նաև գերազանց առիթ է ոչ միայն ծաղիկներ նվիրելու և շնորհավորելու, այլ, առաջին հերթին, վերափաստավորելու կանացի երջանունը՝ լինի մայր, կին, քույր կամ պարզապես անծանոթ օրիորդ: Մենք կարիք ունենք վերջնականապես կանացի գեղեցկության ողջ հմայքը, կանացի մտածողությունն ու նրանից բխող էներգիան ու հնարավորությունները:

Միգուցե ոչ բոլորը գիտեն, որ Մայրության և գեղեցկության միամսյակն առաջին հերթին կապված է Սուրբ Մարիամ Աստվածածնի անվան հետ: Հայ առաքելական եկեղեցին Սուրբ Կույսի տոնը նշում է անփոփոխ՝ ապրիլի 7-ին, երբ եկեղեցիներում կատարվում է մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության արարողություն: Այդ օրը հայտնի է եղել նաև հեթանոսական Հայաստանում, որպես առավել սիրելի աստվածության՝ բեղմնավորման, բժշկության հովանավոր, միևնույն ժամանակ, ուսուցիչ աստվածուհի Դիցամայր Անահիտի տոն: Եվ իրոք, միամսյակն, առաջին հերթին, մայրությանն է վերաբերում: Ծով բարության և չխամրող սիրո, արարման և նորոգման խորհուրդն է Մայրը, ու թե՛ Աստված, ապա Մայրը նրան ամենամոտն է կանգնած...

Ասում են, որ ոչինչ այնքան չի գեղեցկացնում կնոջը, որքան լավ ընտրված տղամարդը: Սա, իհարկե, վերապահումներով, խոստովանում են կանայք: Յուրաքանչյուր «լավ ընտրված» խելացի

տղամարդ, սիրում է, երբ կողքին խելացի կին է լինում: Խելացի կինը նաև լավ ընկեր է, հետաքրքիր զրուցակից, արժեքավոր խորհրդատու: Ասում են, թե նման կնոջից անհնար է ակնկալել հարգանք պարզապես տղամարդ լինելու պատճառով: Նման հարգանքը կարելի է միայն վաստակել, այն էլ տևական և հաստատուն ներկայության, վստահության շնորհիվ: «Կնոջ հետ անցկացրած ժամանակը միշտ էլ օգտակար է», - կասեր Անդրե Մորուան: Իսկ Օնասիսը կավելացներ. «Առանց կանանց աշխարհի հարստությունները կիմաստազրկվեին, նրանք են արվեստագետների ոգեշնչման հիմնական աղբյուրը»: Հանուն սիրելի կնոջ ոչ միայն կարելի է կյանք տալ, այլ անգամ ամուսնանալ նրա հետ: Եվ իհարկե, առիթը պետք է օգտագործել խոսելու համար կանանց՝ հասարակության մեջ հավասար տեղ ունենալու մասին: Իհարկե հաճելի և ողջունելի է, որ հայերենում ի սկզբանե տղամարդու և կնոջ միջև հավասարությունը սկսվում է միևնույն անձնական դերանունով: Սակայն կյանքի մի շարք ոլորտներում այն այդպես էլ մնում է լեզվի, այլ ոչ թե մտածողության արդյունք: Կարծում եմ, որ ժամանակի, ինչպես նաև առկա գիտելիքի հանրայնորեն յուրացման արդյունքում միջնուսային հավասարությունը աստիճանաբար դառնում է ակնհայտ, երկար սպասված և ողջունելի իրականություն: Եվ այդ գործընթացին իրենց ուրույն աջակցությունն են ցուցաբերում նաև կին առաջնորդներն իրենց ակտիվ գործունեությամբ՝ հա-



վասարապես և՛ ընտանեկան, և՛ հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներում: Միգուցե որոշ առանձին վերապահումներով, այն էլ փոխադարձ համաձայնությամբ ու ընդհանուր գիտակցությամբ, բայց մենք պետք է միայն ողջունենք, աջակցենք և ավելացնենք կանանց մասնակցությունը հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Այն կարող է միայն բարելավել կյանքի որակն ու նվազեցնել առկա լարվածությունը, ստեղծել այլընտրանքային լուծումներ գտնելու համար անհրաժեշտ միջավայր, մի բան, որի կարիքն, ըստ իս, խորապես զգացվում է: Այս առումով Մայրության և գեղեցկության տոնը պետք է, որ լինի ոչ միայն բազմաթիվ շնորհավորանքների, այլ նախ և առաջ գեղեցիկի դերն ու նշանակությունը հասարակական և քաղաքական կյանքում ավելացնելուն ուղղված աշխատանքների,

նշանակումների, կանանց դեմ բռնությունն ու չարաշահումները կանխելուն ուղղված սեմինարների, ներկայացումների, կանանց խնդիրների մասին բարձրաձայնող, հասարակական գիտակցությունը բարձրացնող այլ միջոցառումների միամսյակ:

Արդեն վաղուց ավանդույթ է դարձել Դոնի հայկական համայնքի կողմից համայնքի ուսուցիչների Մարտի 8-ը շնորհավորելը: Այս անգամ համայնքը մանկավարժներին նվիրել էր Ռոստոփի Մ. Գորկու անվան պետական ակադեմիական դրամատիկ թատրոնի տոմսեր:

Եզրափակելով, իհարկե ամսվա ընթացքում հերթական անգամ Դոնի հայկական համայնքի ողջ անձնակազմը, ջերմորեն և ի սրտե շնորհավորում է հայոց մայրերի, կանանց և գեղանի աղջիկների տոնը: Մենք ձեզ սիրում ենք, հարգում և գնահատում:

Արմինե Հովսեփյան

«Եվրոտեսիլ 2014»-ի մասնակիցները



Այս տարի «Եվրոտեսիլ 2014» միջազգային հեռուստատեսային մրցույթում Հայաստանը ներկայացնելու է Արամ MP3-ն: Նա ներկայացնելու է «Not alone» երգը, որի խոսքերի հեղինակն է «Վիտամին» ակումբի անդամ, երգչի ընկեր Գարիկ Պապոյանը, իսկ երաժշտությունը գրել է ինքը՝ Արամ MP3-ն: Հայաստանի Հանրապետության հեռուստատեսությունը մարտի 14-ին երեկոյան եթերում իր խոստմանը հավատարիմ հանգուցալուծեց մրցույթի ամենահետաքրքիր

խնդիրներից մեկը՝ ներկայացնելով սպասված երգի ու տեսահոլովակի պրեմիերան: Տեսահոլովակի ռեժիսորն է Գրիգոր Գասպարյանը, գործիքավորումը կատարել է Լիլիթ Նավասարդյանը: Երգն ընտրելիս հաշվի են առնվել համաշխարհային երաժշտական արդի միտումները, հայաստանյան պատվիրակ Արամ MP3-ի ձայնային տվյալներն ու երաժշտական ճաշակին համապատասխանելը: Ինքը՝ կատարողը, թեթևաբանությամբ, որ ստացվել է բա-

վականին հետաքրքիր երգ, քանի որ օգտագործվել է նաև սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությունը: «Մի սպասեք կրակներ և կրակոտ պարեր, այլ սպասեք ավելի հոգևոր երաժշտություն», - տեսաուղերձում նշեց Հայաստանի ղեսպանը մրցույթում: Գեղեցիկ համերգային ծրագրի ընթացքում հեռուստադիտողը հնարավորություն ունեցավ վայելել «Եվրոտեսիլ» մրցույթում մեր երկրի տարբեր տարիների ներկայացուցիչներ Հայկոյի, Գոռ Սուջյանի, Էմմիի, Սիրուշոյի, Անդրեի, Եվա Ռիվասի կատարումները: Առաջին փուլի եթերն անմասն չմնաց նաև այլ պրեմիերաներից: Երեկոյի ընթացքում ցուցադրվեց Արամ MP3-ի կյանքի և ստեղծագործական առաջին քայլերի մասին պատմող տեսանյութ:

Մրցույթի հայաստանյան գեղարվեստական խումբը ստացել էր հայ և օտարազգի կոմպոզիտորների ավելի քան 75 երգ: «Եվրոտեսիլ» մեկնող երգի վերջնական ընտրությունը կատարվել է մի քանի փուլերից բաղկացած լսումների, մանրամասն ուսումնասիրությունների և մասնագիտական Focus group-ի արդյունքում: «Եվրոտեսիլ 2014» 59-րդ ամենամյա մրցույթը տեղի կունենա Դանիայի մայրաքաղաք Կոպենհագենի BW Hallerne սրահում: Մրցույթի կիսաեզրափակիչ փուլն այս տարի կկայանա մայիսի 6-ին և 8-ին, իսկ եզրափակիչը՝

մայիսի 10-ին: Հայաստանի պատվիրակ Արամ MP3-ն ելույթ կունենա մայիսի 6-ին՝ առաջին կիսաեզրափակիչ փուլի համերգային առաջին հատվածում: Արամ MP3-ն մրցույթին ընդհանուր տարեսկզբին ներկայացրեց շվեդական Մալմյո քաղաքում «Եվրոտեսիլ 2013»-ի հաղթող Դանիացի Էմիլիի «Only Teardrops» երգի իր մեկնաբանությունը:

Հայաստանի լավագույն ցուցանիշը «Եվրոտեսիլ»-ում 2008 թվականին էր, երբ երգչուհի Սիրուշոն իր «Բելե-բելե» երգով զբաղեցրեց չորրորդ հորիզոնականը: «Եվրոտեսիլ»-ի եզրափակիչ փուլում Lonely planet երգը ներկայացնող «Դորիանս» ռոք խմբին չհաջողվեց հայտնվել լավագույն տասնյակում:

Ինչ վերաբերվում է Ռուսաստանին, ապա այս տարի Ռուսաստանի ներկայացուցիչներն են երկվորյակներ Մաշա և Նաստյա Տոլմաչևաները: Դեռևս հայտնի չէ, թե Տոլմաչևա քույրերն որ երգով են հանդես գալու: Նրանք 2006-ի մանկական «Եվրոտեսիլ» երգի մրցույթի ռուսաստանյան պատվիրակներն էին, որտեղ զբաղեցրել էին առաջին հորիզոնականները: Հաղթանակից հետո տված մամուլի ասուլիսի ժամանակ քույրերը հայտարարել էին, որ երազում են մի օր լինել մեծահասակների «Եվրոտեսիլ»-ում:

Արմա Ազևալույան